ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 17.08.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/27

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ) քննելով «Գաշես» ՍՊԸ-ի 31.07.2017թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև բողոք) և կից նյութերը, պարզեց հետևյալը.

1. **«Գաշես» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«Գաշես» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) 31.07.2017թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

ՀՀ ԿԱ քաղաքաշինության կոմիտեի կողմից Երևանի թիվ 91 դպրոցի վերականգնման աշխատանքների ձեռքբերման նպատակով 2017թ. մայիսի 26-ի թիվ 2 որոշմամբ կազմակերպել է «ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/7» ծածկագրով գնման բաց ընթացակարգ:

Ընկերությունը հայտնել է, որ 2017թ. հուլիսի 25-ին կայացած «ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/7» ծածկագրով գնման բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) նիստի թիվ 2-4 արձանագրության 1.7 հետի համաձայն «Գաշես» ՍՊԸ և «Զեթ Պրոֆիլ» ՍՊԸ կոնսորցիումի հայտը գնահատվել է անբավարար՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Հայտում ներառված փաստաթղթերի մի մասը, այդ թվում գնի առաջարկը և հայտի ապահովումը, ստորագրվել են ավելի շուտ, քան համատեղ գործունեության պայմանագիրը»:

Ընկերությունը նշել է, որ Հրավերի հայտի 2.2.9-րդ կետի համաձայն՝ «Գաշես» ՍՊԸ-ն և «Զեթ Պրոֆիլ» ՍՊԸ-ն 2017թ. հունիսի 28-ին կնքել և ստորագրել են համատեղ գործունեության պայմանագիր (կոնսորցում), որը, ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 441-րդ հոդվածի՝ ուժի մեջ է մտնում և կողմերի համար պարտադիր է դառնում կնքվելու պահից սկսած, իսկ հայտը ներկայացվել և էլեկտրոնային եղանակով ստորագրվել է 2017թ. հունիսի 30-ին www.armeps.am համակարգի միջոցով:

Ընկերությունը հայտնել է նաև, որ «Գաշես» ՍՊԸ-ի և «Զեթ Պրոֆիլ» ՍՊԸ-ի տնօրենները հայտում ներառված փաստաթղթերը, այդ թվում գնի առաջարկը և հայտի ապահովումը, էլեկտրոնային եղանակով ստորագրել են համատեղ գործունեության պայմանագիրը ուժի մեջ մտնելուց առնվազն 48 ժամ հետո, ինչից հետևում է, որ «Գաշես» ՍՊԸ-ի և «Զեթ Պրոֆիլ» ՍՊԸ-ի տնօրենները էլեկտրոնային եղանակով ստորագրել են այն ժամանակ, երբ ունեցել են համապատասխան իրավունքը՝ լիազորությունը:

Ընկերությունը գտնում է, որ Հանձնաժողովը տվյալ պատճառաբանությամբ իրավունք չունի հայտը գնահատել անբավարար:

Ընկերությունը նշել է, որ 2017թ. հուլիսի 25-ին կայացած «ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/7» ծածկագրով գնման բաց ընթացակարգի Հանձնաժողովի նիստի թիվ 2-4 արձանագրությամբ հայտերի գնահատման արդյունքներով բավարար են գնահատվել հայտեր, որոնց վճարման պայմանագրերում բացակայում է կնիքը, որը «ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/7» ծածկագրով գնման բաց ընթացակարգի հայտի վճարման պահանջագրի վավերապայմանների և լրացման կարգի 18բ կետի համաձայն՝ պարտադիր է համարվում:

Ընկերությունը, Խորհրդին ներկայացված բողոքով խնդրել է՝

Կիրառել ժամանակավոր միջոց և կասեցնել ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի կողմից Երևանի թիվ 91 դպրոցի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 2017թ. մայիսի 26-ի թիվ 2 որոշմամբ կազմակերպված «ՀՀ ՔՊԿ ԲԸԱՇՁԲ 17/7» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի ցանկացած գործողության իրականացումը և որոշումների կայացումը՝ այդ թվում նաև պայմանագրի կնքման որոշման իրականացումը:

Բողոքի քննության վերաբերյալ 11.08.2017թ. տեղի ունեցած նիստին Ընկերության ներկայացուցիչը իր կողմից ներկայացված բողոքի պահանջը լրացրեց հետևյալ

բովանդակությամբ՝ դադարեցնել «ՀՀ ՔՊԿ ԲԸԱՇՁԲ 17/7» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի «Գաշես» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը անբավարար գնահատելու որոշումը:

Խորհրդի նիստերին մասնակցում էր «Գաշես» ՍՊԸ-ի տնօրեն Գագիկ Վարդանյանը:

2. ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.

ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 03.08.2017թ. թիվ 02/27.1/4914-17 գրությամբ Խորհրդին է ներկայացրել «ՀՀ ՔՊԿ ԲԸԱՇՁԲ 17/7» ծածկագրով բաց ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) «Գաշես» ՍՊԸ և «Զեթ Պրոֆիլ» ՍՊԸ կոնսորցիումով ներկայացված հայտում ներառված փաստաթղթերի պատճենները, ինչպես նաև դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

««Գաշես» և «Զեթ Պրոֆիլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կոնսորցիումի կողմից համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիրն էլեկտրոնային եղանակով ստորագրվել է 2017 թվականի հունիսի 30-ին ժամը 17:03:23, իսկ հայտում ներառված փաստաթղթերի մի մասը՝ այդ թվում նաև գնային առաջարկը և հայտի ապահովումը ստորագրվել են ավելի շուտ քան համատեղ գործունեության պայմանագիրն ուժի մեջ մտնելը (համատեղ գործունեության պայմանագրի 7.1 կետով սահմանված է. «Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից...»):

Գնահատող հանձնաժողովը «Գաշես»-«Զեթ Պրոֆիլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կոնսորցիումի հայտը մերժել է, քանի որ համատեղ գործունեության պայմանագիրն ավելի ուշ է ուժի մեջ մտել, քան համատեղ ստորագրվել են գնային առաջարկը և հայտի ապահովումը:

Հաշվի առնելով վերոգրյալը գտնում ենք, որ «Գաշես» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքն ենթակա է մերժման:»:

Խորհրդի նիստերին մասնակցում էր ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի գնումների բաժնի պետ Արայիկ Մնացականյանը:

3. ԳԲԽ-ԷՍ-2017/27 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.

Խորհուրդն ուսումնասիրել է «Գաշես» ՍՊԸ-ի կողմից 31.07.2017թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի 03.08.2017թ. թիվ 02/27.1/4914-17 գրությունը, «ՀՀ ՔՊԿ ԲԸԱՇՁԲ 17/7» ծածկագրով բաց ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՀՀ ՔՊԿ ԲԸԱՇՁԲ 17/7» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.07.2017թ. թիվ 2-4 արձանագրությունը, Պատվիրատուի ներկայացրած դիրքորոշումը և կարծիքը.

ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն Երևանի թիվ 91 դպրոցի վերականգնման աշխատանքների ձեռքբերման նպատակով 2017թ. մայսիս 26-ի թիվ 2 որոշմամբ կազմակերպել է «ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/7» ծածկագրով գնման բաց ընթացակարգ (այսուհետ՝ նաև ընթացակարգ), որին մասնակցության հայտ է ներկայացրել «Գաշես» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 25.07.2017թ. թիվ 2-4 արձանագրության 1.7 կետով մերժել է «Գաշես» ՍՊԸ և «Զեթ Պրոֆիլ» ՍՊԸ կոնսորցիումի հայտը հետևալ հիմնավորմամբ՝ «Գաշես» ՍՊԸ և «Զեթ Պրոֆիլ» ՍՊԸ կոնսորցիումի հայտում ներառված փաստաթղթերի մի մասը (այդ թվում գնի առաջարկը և հայտի ապահովումը) ստորագրվել են ավելի շուտ քան համատեղ գործունեության (կոնսորցումի) պայմանագիրը:

Բողոքի քննության նպատակով 04.08.2017թ. տեղի ունեցած նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը հայտնեց, որ համատեղ գործունեության պայմանագիրը կնքվել և ստորագրվել է 28.06.2017թ., այսինքն, հայտը www.armeps.am համակարգի միջոցով ներբեռնելուց 2 օր առաջ, իսկ պայմանգրի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը Ընկերության կողմից ներկայացվել է Պատվիրատուին 30.06.2017թ.:

Համատեղ գործունեության պայմանագրի 7.1 կետի համաձայն՝ նույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև նույն պայմանագրի 1.1 կետում նշված գործունեության իրականացման ավարտը՝ ներառյալ 3-րդ անձանց կողմից պահանջների և այլ հարաբերությունների հետ կապված հարցերի և խնդիրների ամբողջովին լուծման համար անհրաժեշտ ժամկետը:

Խորհուրդն արձանագրում է, որ «Գաշես» ՍՊԸ և «Զեթ Պրոֆիլ» ՍՊԸ կոնսորցիումի կողմից Ընթացակարգին մասնակցելու նպատակով կնքված համատեղ գործունեության պայմանագիրը Ընկերությունների տնօրենների կողմից երկկողմանի ստորագրվել և ուժի մեջ է մտել ստորագրման պահից՝ 28.06.2017թ.-ից.:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք)՝

- 436-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագիր է համարվում երկու կամ մի քանի անձանց համաձայնությունը, որն ուղղված է քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դադարելուն;
- 441-րդ հոդվածի համաձայն՝ պայմանագիրն ուժի մեջ է մտնում և կողմերի համար պարտադիր է դառնում կնքելու պահից;

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Ընթացակարգի հրավերի 7.5.2 կետի համաձայն՝ մասնակիցները կարող են նույն ընթացակարգին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով):

Հրավերի 2-րդ մասի՝ բաց ընթացակարգի մասին հայտը պատրաստելու հրահանգի (այսուհետ՝ հրահանգ) 2.2.9 կետի համաձայն՝ մասնակիցը ներկայացնում է համատեղ գործունեության պայմանագիրը, եթե մասնակիցը գնման ընթացակարգին մասնակցում է համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով):

Խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովը՝ «Գաշես» ՍՊԸ և «Զեթ Պրոֆիլ» ՍՊԸ կոնսորցիումի հայտը մերժելով՝ խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով, 2-րդ մասի 1-ին կետով և հրահանգի 2.2.9 կետով սահմանված պահանջները, քանի որ Ընկերությունների կողմից ստորագրված համատեղ գործունեության պայմանագիրն ստորագրվել և ուժի մեջ է մտել վերջիններիս կողմից մինչև Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտով ներկայացված Հրավերով պահանջվող մյուս փաստաթղթերը ներկայացնելը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետով՝ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Գաշես» ՍՊԸ-ի 31.07.2017թ. ներկայացրած բողոքը բավարարել մասնակի:

2. Դադարեցնել «ՀՀ ՔՊԿ ԲԸԱՇՁԲ 17/7» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի «Գաշես» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը անբավարար գնահատելու որոշումը:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ